Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2020: «Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման» ծրագրի եզրափակիչ արարողություն

2022թ. հունիսի 20-ին Արաքսավան գյուղում տեղի ունեցավ «Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման» մինչև 79,401 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2020) համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Արարատի մարզպետ պարոն Սեդրակ Թևոնյանը, Արտաշատի համայնքապետ պարոն Կառլեն Մկրտչյանը, Արաքսավան գյուղի վարչական ղեկավար պարոն Ատոմ Թաղևոսյանը, Եվրասիա բարեգործական ՀԿ տնօրեն տիկին Լիանա Եսայանը, ինչպես նաև այլ շահառուներ:

Ծրագրի նպատակն է եղել նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման միջոցով ավելացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, ինչն իր հերթին կնպաստի գյուղի հողագործների տնտեսական անկախությանը: Արդյունքում, ավելի քան 240 հողագործ և վերջիններիս ընտանիքները հնարավորություն են ստացել ոռոգել 60 հա տարածք: Ծրագրի մյուս առավելությունը կայանում է նրանում, որ գյուղի ջրի և հողի արդյունավետ օգտագործումը հետագայում կնպաստի շրջակա միջավայրի և էկոլոգիայի կայունությանը տարածաշրջանում:

Նորաստեղծ պոմպակայանը

Պաշտոնական բացման արարողությունը

Նոր տեղադրված ոռոգման համակարգը

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը